# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ – 02

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 20-Ը ԱՊՐԻԼԻ 2015Թ. ԹԻՎ 2 ՆԻՍՏԻ:

Նիստին մասնակցում էին համայնքի 10 ավագանիներից 7-ը՝ Ա. ՄՈՍՈՅԱՆ, Ա. ՄԵԼԻՔՅԱՆ, Ս. ԲԱՂԴԱՄԱՐՅԱՆ, Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ, Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ, Վ. ՄՀԵՐՅԱՆ, Վ. ՄԿՐՏՉՅԱՆ:

Նիստը վարում էր քաղաքապետ Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ

Քարտուղարությամբ՝ Գ. ՈՍԿԱՆՅԱՆԻ

## ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

ՀԱՐՑ-28. <<Մարտունի համայնքի 2015 թվականի բյուջեի առաջին եռամսյակի կատարման վերաբերյալ քաղաքապետի հաշվետվությունը հաստատելու մասին>> ավագանու որոշումը:

ԶԵԿ. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՐՑ-29.<<Մարտունի համայնքի 2015 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու համաձայնություն տալու մասին>> ավագանու որոշումը:

ԶԵԿ. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՐՑ-30. <<Մարտունի համայնքի ավագանու 29.03.2007 թ. <<Մարտունի քաղաքի գեղարվեստի դպրոց հաճախող երեխաների ուսման վարձ սահմանելու համաձայնություն տալու մասին>> ավագանու N-42 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> ավագանու 24.11.2014 թ. N-64-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> ավագանու որոշումը:

ԶԵԿ. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՐՑ-31. <<Մարտունի քաղաքի Երևանյան և Մյասնիկյան փողոցների տարբեր հատվածների վրա գտնվող եղևնի տեսակի թվով 14 ծառերը հանելու և նույն փողոցների այլ հատվածներում վերատնկելու, ինչպես նաև այդ փողոցների վրա գտնվող թվով 63 <<բարդի>> տեսակի կիսաչոր ծառերը կտրելու համաձայնություն տալու մասին>> ավագանու որոշումը:

ԶԵԿ. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՐՑ-32. <<Մարտունի համայնքի ավագանու 09.02.2015 թ. <<Մարտունու քաղաքապետարանի վարչական շենքի գրասենյակային տարածքները վարձակալության տրամադրելու համար նոր վարձավճարի չափ սահմանելու համաձայնություն տալու մասին>> թիվ 16 որոշման մեջ լրացում կատարելու մասին>> ավագանու որոշումը:

ԶԵԿ. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՐՑ-33. <<Մարտունի քաղաքի թվով չորս մսուր-մանկապարտեզների երեխաներին ճաշի և բեյի սպասք գնելու համար գումար հատկացնելու համաձայնություն տալու մասին>> ավագանու որոշումը:

ԶԵԿ. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՐՑ-34. <<Մարտունի քաղաքի թվով չորս մսուր-մանկապարտեզներին սեղանների երեսպատման և խաղալիքների պահարանների գնման համար գումար հատկացնելու համաձայնություն տալու մասին>> ավագանու որոշումը:

*ԶԵԿ. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

ՀԱՐՑ-35. <<Մարտունի քաղաքի թվով չորս մսուր-մանկապարտեզների շենքերի դերատիզացիայի համար գումար հատկացնելու համաձայնություն տալու մասին>> ավագանու որոշումը:

*ԶԵԿ. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

ՀԱՐՑ-36. <<Մարտունի քաղաքի գրունտային և երկրորդական ճանապարհների հարթեցման համար դիզելային վառելանյութի և խճաքարի գնման համար գումար հատկացնելու համաձայնություն տալու մասին>> ավագանու որոշումը:

*ԶԵԿ. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

ՀԱՐՑ-37. <<Հայոց ցեղասպանության 100-րդ տարեդարձի միջոցառումների կազմակերպման համար գումար հատկացնելու համաձայնություն տալու մասին>> ավագանու որոշումը:

*ԶԵԿ. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

ՀԱՐՑ-38.<<Մարտունու քաղաքապետարանի վարչական շենքի դիմացի այգին կանաչապատելու նպատակով ծաղիկների սերմեր գնելու համար գումար հատկացնելու համաձայնություն տալու մասին>> ավագանու որոշումը:

*ԶԵԿ. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

ՀԱՐՑ-39.<<Մարտունու <<Սուրբ Մարիամ Աստվածածին>> եկեղեցու բակում հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված խաչքարի տեղադրման և եկեղեցու տարածքի բարեկարգման աշխատանքների համար գումար հատկացնելու համաձայնություն տալու մասին>> ավագանու որոշումը:

*ԶԵԿ. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

ՀԱՐՑ-40. <<Մարտունու քաղաքապետարանի վարչական շենքի դահլիճի միջանցքի լուսամուտները փոխելու համար գումար հատկացնելու համաձայնություն տալու մասին>> ավագանու որոշումը:

*ԶԵԿ. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

ՀԱՐՑ-41. <<Մարտունի համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքներից 7 (յոթ) լոտով 2269 քմ ընդհանուր մակերեսով հողատարածք աճուրդ-վաճառքի կարգով օտարելու համաձայնություն տալու մասին>> ավագանու որոշումը:

*ԶԵԿ. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

ՀԱՐՑ-42.<<Մինչև 300 քմ մակերեսով առանձնատների շինարարարությունը և շինարարության որակի տեխնիկական հսկողությունը առանց լիցենզավորման իրականացնելու խնդրանքով Հայաստանի Հանրապետության վարչապետ պարոն Հովիկ Աբրահամյանին ուղերձով դիմելու մասին>> ավագանու որոշումը:

*ԶԵԿ. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

ՀԱՐՑ- 43. <<Դիմումների քննարկում>>:

Մարտունու քաղաքապետ Բ. Հարությունյանի առաջարկով <<Մարտունու մանկապատանեկան կենտրոն>> հիմնարկը լուծարելու համաձայնություն տալու մասին>> հարցը հանվեց օրակարգից:

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝ 7, դեմ, ձեռնպահ չկա:

Մարտունու քաղաքապետ՝ Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համայնքի ավագանիներ՝

Վ. ՄՀԵՐՅԱՆ

Վ. ՄԿՐՏՉՅԱՆ

Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ս. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Ա. ՄՈՍՈՅԱՆ

Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Ա. ՄԵԼԻՔՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

# *ՈՐՈՇՈՒՄ N 28-Ն*

*«20»-ը ապրիլի 2015թ.* *ք. Մարտունի*

<<Մարտունի համայնքի 2015 թվականի բյուջեի առաջին եռամսյակի կատարման վերաբերյալ քաղաքապետի հաշվետվությունը հաստատելու մասին>> ավագանու որոշումը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով.

*ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ*
*ՈՐՈՇՈՒՄ Է.*

Հաստատել Մարտունի համայնքի 2015թ. բյուջեի առաջին եռամսյակի կատարման վերաբերյալ քաղաքապետի հաշվետվությունը (Կից ներկայացվում է):

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝ 7, դեմ, ձեռնպահ չկա:

Մարտունու քաղաքապետ՝ Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համայնքի ավագանիներ՝
Վ. ՄՀԵՐՅԱՆ
Վ. ՄԿՐՏՉՅԱՆ
Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ
Ս. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Ա. ՄՈՍՈՅԱՆ
Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ
Ա. ՄԵԼԻՔՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# *ՈՐՈՇՈՒՄ N 29-Ն*

*«20»-ը ապրիլի 2015թ.* *ք. Մարտունի*

<<Մարտունի համայնքի 2015 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու համաձայնություն տալու մասին>> ավագանու որոշումը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, <<Բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի պահանջներով.

*ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ*
*ՈՐՈՇՈՒՄ Է.*

Մարտունի համայնքի 2015 թվականի բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները:

1.Մարտունի համայնքի 2015 թ. բյուջեի վարչական մասի եկամուտները ավելացնել <<Պետական բյուջեից տրվող այլ դոտացիաներ՝ նախահաշիվ 3359500 (երեք միլիոն երեք հարյուր հիսունինը հազար հինգ հարյուր) դրամ:

2.Մարտունի համայնքի 2015 թ. բյուջեի ծախսերը ավելացնել Պահուստային ֆոնդի 4891հոդված-3359500 (երեք միլիոն երեք հարյուր հիսունինը հազար հինգ հարյուր) դրամ:

3.<<Պատվիրակված լիազորությունների կատարում ՔԿԱԳ-ի բաժին>> նախահաշվից ծախսերը պակասեցնել 193500 (մեկ հարյուր իննսուներեք հազար հինգ հարյուր) դրամ, որից 4111 հոդված-50000 (հիսուն հազար) դրամ, 4221 հոդված-50000 (հիսուն հազար) դրամ, 4267 հոդված-40000 (քառասուն հազար) դրամ, 4261 հոդված-53500 (հիսուներեք հազար հինգ հարյուր) դրամ:

4. Մարտունի համայնքի 2015 թ. բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից 113000 (մեկ հարյուր տասներեք հազար) դրամ տեղափոխել Մարտունու գեղարվեստի դպրոցի նախահաշվի 4111 հոդված:

5. Մարտունի համայնքի 2015 թ. բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից 1128000 (մեկ միլիոն մեկ հարյուր քսանութ հազար) դրամ տեղափոխել <<Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ>> նախահաշվի 4234 հոդված-500000 (հինգ հարյուր հազար) դրամ, 4823 հոդված-200000 (երկու հարյուր հազար) դրամ, երաժշտական դպրոցի նախահաշվի 4239 հոդված-308000 (երեք հարյուր ութ հազար) դրամ, Մարտունու մշակույթի տան նախահաշվի 4267 հոդված-120000 (մեկ հարյուր քսան հազար) դրամ:

6. Մարտունի համայնքի 2015 թ. բյուջեի ֆոնդային մասի ազատ մնացորդից 990000 (ինը հարյուր իննսուն հազար) դրամ տեղափոխել Մարտունու մշակույթի տան նախահաշվի 5129 հոդված՝ երաժշտական սարքավորումներ գնելու նպատակով:

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝ 7, դեմ, ձեռնպահ չկա:

Մարտունու քաղաքապետ՝ Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համայնքի ավագանիներ՝

Վ. ՄՀԵՐՅԱՆ
Վ. ՄԿՐՏՉՅԱՆ
Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ
Ս. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Ա. ՄՈՍՈՅԱՆ
Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ
Ա. ՄԵԼԻՔՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# *ՈՐՈՇՈՒՄ N 30-Ն*

*«20»-ը ապրիլի 2015թ.* *ք. Մարտունի*

<<Մարտունի համայնքի ավագանու 29.03.2007 թ. <<Մարտունի քաղաքի գեղարվեստի դպրոց հաճախող երեխաների ուսման վարձ սահմանելու համաձայնություն տալու մասին>> ավագանու N-42 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> ավագանու 24.11.2014 թ. N-64-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> ավագանու որոշումը:

Նկատի ունենալով, որ ուսումնական տարին Մարտունու գեղարվեստի դպրոցում սկսվում է սեպտեմբերի 1-ից և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետի պահանջներով.

*ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ*
*ՈՐՈՇՈՒՄ Է.*

1. Մարտունի համայնքի ավագանու 24.11.2014 թ. թիվ 64-Ն որոշման 2-րդ կետի <<հունվարի 1-ից>> բառերը փոփոխել <<սեպտեմբերի 1-ից >> բառերով:

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝ 7, դեմ, ձեռնպահ չկա:

Մարտունու քաղաքապետ՝ Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համայնքի ավագանիներ՝

Վ. ՄՀԵՐՅԱՆ
Վ. ՄԿՐՏՉՅԱՆ
Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ
Ս. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Ա. ՄՈՍՈՅԱՆ
Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ
Ա. ՄԵԼԻՔՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# *ՈՐՈՇՈՒՄ N 31*

*«20»-ը ապրիլի 2015թ.* *ք. Մարտունի*

<<Մարտունի քաղաքի Երևանյան և Մյասնիկյան փողոցների տարբեր հատվածների վրա գտնվող եղևնի տեսակի թվով 14 ծառերը հանելու և նույն փողոցների այլ հատվածներում վերատնկելու, ինչպես նաև այդ փողոցների վրա գտնվող թվով 63 <<բարդի>> տեսակի կիսաչոր ծառերը կտրելու համաձայնություն տալու մասին>> ավագանու որոշումը:

Մարտունի քաղաքի Երևանյան և Մյասնիկյան փողոցների վրա որոշակի հատվածներում ավտոկայանատեղիներ կառուցելու, ինչպես նաև այդ փողոցների վրա աճած <<բարդի>> տեսակի կիսաչոր ծառերը հատելու և <<եղևնի>> տեսակի ծառերը վերատնկելու անհրաժեշտությունից ելնելով.

*ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ*
*ՈՐՈՇՈՒՄ Է.*

1. Համաձայնություն տալՄարտունի քաղաքի Երևանյան և Մյասնիկյան փողոցների վրա աճած թվով 14 եղևնիները այդ փողոցների այլ հատվածներում վերատնկելու, ինչպես նաև <<բարդի>> տեսակի կիսաչոր վիճակում գտնվող թվով 63 ծառերը հատելու համար:

2.Հատված ծառերից գոյացած շինափայտը հանձնաժողովի մասնակցությամբ մուտքագրել քաղաքապետարանի հաշվեկշիռ և օգտագործել Մարտունու շախմատի դպրոցի կտուրի վերանորոգման համար, իսկ վառելափայտը դիմումների հիման վրա հատկացնել սոցիալապես անապահով ընտանիքներին:

3.Մյասնիկյան և Երևանյան փողոցների, ինչպես նաև Մարտունու թիվ 2 ավագ դպրոցի ցանկապատի երկայնքով աճած <<բարդի>> տեսակի ծառերի հատման, դպրոցի ցանկապատի քանդման և կրկին տեղադրման, շինափայտը սղոցարան տեղափոխելու և պահեստավորելու նպատակով, Մարտունի համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից 450000 (չորս հարյուր հիսուն հազար) դրամ տեղափոխել ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ>> նախահաշվի 4239 հոդված՝ ծառայության գնում կատարելու համար:

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝ 7, դեմ, ձեռնպահ չկա:

Մարտունու քաղաքապետ՝ Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համայնքի ավագանիներ՝ Վ. ՄՀԵՐՅԱՆ

Վ. ՄԿՐՏՉՅԱՆ

Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ս. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Ա. ՄՈՍՈՅԱՆ

Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Ա. ՄԵԼԻՔՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## *ՈՐՈՇՈՒՄ N 32-Ն*

*«20»-ը ապրիլի 2015թ.* *ք. Մարտունի*

<<Մարտունի համայնքի ավագանու 09.02.2015 թ. <<Մարտունու քաղաքապետարանի վարչական շենքի գրասենյակային տարածքները վարձակալության տրամադրելու համար նոր վարձավճարի չափ սահմանելու համաձայնություն տալու մասին>> թիվ 16 որոշման մեջ լրացում կատարելու մասին>> ավագանու որոշումը:

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով.

*ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ*
*ՈՐՈՇՈՒՄ Է.*

1.Մարտունի համայնքի ավագանու 09.02.2015 թ. <<Մարտունի համայնքի ավագանու 09.02.2015 թ. <<Մարտունու քաղաքապետարանի վարչական շենքի գրասենյակային տարածքները վարձակալության տրամադրելու համար նոր վարձավճարի չափ սահմանելու համաձայնություն տալու մասին>> թիվ 16 որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-րդ կետով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2016 թվականի հունվարի 1-ից:

Հարցը քվեարկվեց` կողմ` 7, դեմ, ձեռնպահ չկա:

Մարտունու քաղաքապետ` Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համայնքի ավագանիներ`
Վ. ՄՀԵՐՅԱՆ
Վ. ՄԿՐՏՉՅԱՆ
Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ
Ս. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Ա. ՄՈՍՈՅԱՆ
Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ
Ա. ՄԵԼԻՔՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# *ՈՐՈՇՈՒՄ N 33*

*«20»-ը ապրիլի 2015թ.* *ք. Մարտունի*

<<Մարտունի քաղաքի թվով չորս մսուր-մանկապարտեզների երեխաներին ճաշի և թեյի սպասք գնելու համար գումար հատկացնելու համաձայնություն տալու մասին>> ավագանու որոշումը:

Մարտունի քաղաքի թվով չորս մսուր-մանկապարտեզների երեխաներին ճաշի և թեյի սպասք գնելու անհրաժեշտությունից ելնելով և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով.

*ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ*
*ՈՐՈՇՈՒՄ Է.*

1.Համաձայնություն տալ Մարտունի քաղաքի թվով չորս մսուր-մանկապարտեզների երեխաներին ճաշի և թեյի սպասք գնելու համար համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից հատկացնել 700000 (յոթ հարյուր հազար) դրամ:

2. Գնումը կատարել ԲԸԱՀ հրապարակման:

Հարցը քվեարկվեց` կողմ` 7, դեմ, ձեռնպահ չկա:

Մարտունու քաղաքապետ` Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համայնքի ավագանիներ`
Վ. ՄՀԵՐՅԱՆ
Վ. ՄԿՐՏՉՅԱՆ
Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ
Մ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Ա. ՄՈՍՈՅԱՆ
Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ
Ա. ՄԵԼԻՔՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# *ՈՐՈՇՈՒՄ N 34*

*«20»-ը ապրիլի 2015թ.* *ք. Մարտունի*

<<Մարտունի քաղաքի թվով չորս մսուր-մանկապարտեզներին սեղանների երեսպատման և խաղալիքների պահարանների գնման համար գումար հատկացնելու համաձայնություն տալու մասին>> ավագանու որոշումը:

Մարտունի քաղաքի թվով չորս մսուր-մանկապարտեզների երեխաների ճաշելու համար նախատեսված սեղանների և խոհանոցի սեղանի երեսպատման անհրաժեշտությունից ելնելով և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով.

*ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ*
*ՈՐՈՇՈՒՄ Է.*

1.Համաձայնություն տալ Մարտունի քաղաքի թվով չորս մսուր-մանկապարտեզների երեխաների ճաշելու համար նախատեսված սեղանների և խոհանոցի սեղանի երեսպատման համար համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից հատկացնել 300000 (երեք հարյուր հազար) դրամ:

2. Գնումը կատարել ԲԸԱՀ հրապարակման:

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝ 7, դեմ, ձեռնպահ չկա:

Մարտունու քաղաքապետ՝ Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համայնքի ավագանիներ՝ Վ. ՄՀԵՐՅԱՆ
Վ. ՄԿՐՏՉՅԱՆ
Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ
Ս. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Ա. ՄՈՍՈՅԱՆ
Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ
Ա. ՄԵԼԻՔՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

## *ՈՐՈՇՈՒՄ N 35*

*«»-«20»-ը ապրիլի 2015թ.* *ք. Մարտունի*

<<Մարտունի քաղաքի թվով չորս մսուր-մանկապարտեզների շենքերի դերատիզացիայի համար գումար հատկացնելու համաձայնություն տալու մասին>> ավագանու որոշումը:

Մարտունի քաղաքի թվով չորս մսուր-մանկապարտեզների շենքերի դերատիզացիայի կատարման անհրաժեշտությունից ելնելով և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով.

*ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ*
*ՈՐՈՇՈՒՄ Է.*

Համաձայնություն տալ Մարտունի քաղաքի թվով չորս մսուր-մանկապարտեզների շենքերի դերատիզացիայի համար համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից հատկացնել 300000 (երեք հարյուր հազար) դրամ:

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝ 7, դեմ, ձեռնպահ չկա:

Մարտունու քաղաքապետ՝ Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համայնքի ավագանիներ՝

Վ. ՄՀԵՐՅԱՆ
Վ. ՄԿՐՏՉՅԱՆ
Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ
Ս. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Ա. ՄՈՍՈՅԱՆ
Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ
Ա. ՄԵԼԻՔՅԱՆ